




Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Ն Հ Ե Տ *

Ե.— ՀԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՄԲԱՆ

I.— Առաջին հաղթանակ

Կոմիտասի առաջին համերգը տեղի ունեցավ ու վերածվեցավ փառատոնի մը: Բոլոր դավերը ձախողեր էին և առանց ուղեւու, համերգը վերածեր էին հաղթանակի մը:

Այդ օրն էր, որ կնվիրագործեր Կոմիտասի նոր առաքելութունը և ճամբա կրանար նոր հաղթանակներու, որոնք, անկե հետո, հաշորգեցին իրարու, թեև խուպոտ ձայները միշտ չգաղղեցան և մթնոլորտը թունավորել փորձողներ միշտ գտնվեցան...

1910 նոյեմբեր 21/4 դեկտեմբերի այդ համերգին մասին կդրեինք «Ազատամարտ»-ի մեջ:

«Կիրակիի համերգը— Բլտի-շանի թատրոնի մեջ— հայկական երգին ու երաժշտության համար սարքված, այսպես ըսենք, ապոտեոզի հանդես մը եղավ: 300 հոգինոց երդախումբ մը, ծաղկատի փոքրիկներն և երիտասարդներն բաղկացած, երգեց հայ եկեղեցական և ժողովրդական երգեր՝ ղեկավարութեամբ Կոմիտաս վարդապետի: Կիրակիի համերգը ցույց աւալ, թե ո՞ր աստիճան մեծ արժանիքով մը կներկայանա հայ

տոհմիկ երաժշտութիւնը, և Կոմիտաս վարդապետի գործը ո՞րքան դնահատելի է՝ իր տաղանդովն ու աշխատութեամբը ձայնագրելով և երևան յերեւելով, այնքան փայլուն հաջողութեամբ մը, հայ գեղարվեստական հանճարին արդյունքները:

Բացի խմբերգերէն, երգվեցան նաև մեներգներ, երկերգներ և եռերգներ, որոնց մասնակցեցան օրիորդներ և երիտասարդներ: Մասնավորապես հիշատակելի էին [Հայկ և Արտաշես] Սեմերճյան եղբայրները և օրիորդ [Զապել] Նորիկյան: Իսկ Կոմիտաս վարդապետ ինքը, հակառակ իր հիվանդագին վիճակին, առանձինն գեղեցկորեն երգեց թե՛ եկեղեցական և թե՛ ժողովրդական մեներգներ, ինչպես հին տաղեր, կարոտի երգեր և հովվերգներ, միևնույն ատեն ինքն իսկ ընկերանալով իր մեներգներուն՝ դաշնակի կամ երգեհոնի վրա:

Ժողովուրդը, որ ներկա էր հոն բազմութեամբ, արտասովոր խանդավառութեամբ կհետևեր այդ երգեցողութիւններուն, մանավանդ ժողովրդական երգերուն: Գերմանացի երաժշտագետ մը, Պոլ Լանգե քեյ, որ ներկա էր համերգի առաջին մասին, հիացումով կխոսեր հայ երաժշտութեան նկատմամբ:

Եվ հետևյալ նոթը կկցեինք սույն տեղեկատվութեան.

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Մ Մ Ա-ից, Ե—Ջ—Է-ից, Ը—Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի Մ Ա-ից:

«Հետադիմականներու սարքած դավերը Կոմիտաս վարդապետի գործը ձախողեցնելու համար,— և այդ մտքով նույնիսկ Բերայի կառավարիչին մոտ զրպարտած էին զայն, թե խռովարարական երգեր պիտի երգե,— ապարդյուն անցան, և Կոմիտաս վարդապետ, հակառակ նաև հավատաքննական արգելքներու, իր ծրագիրը գործադրեց ժողովրդային միահամուռ համամտության մեջ»⁴⁷:

«Բյուզանդիոն» կգրեր իր կարգին.

«Անօրինակ և խանդավառ ոգևորության մեջ երեկ տեղի ունեցավ Կոմիտաս վարդապետի համերգը, որ արվեստի հաղթանակ մը եղավ: Երեք հարյուրի շափ ծաղկատի աղջիկներ և երաժշտասեր պատանիներ սրրագան և քնագավառի տոհմիկ երգերով 3 ժամ վերացուցին, դուլթեցին ներկաներու բազմությունը: Տ. Կոմիտաս վարդապետ այսքան կարճ ժամանակամիջոցի մեջ մարզելով այս ստվար երգչախումբը, ցույց տվավ, թե անվիճելի կերպով մասնագետն է, վարպետն է այս արվեստին: ... Տ. Կոմիտաս վարդապետի դեմ ամեն մեքենայություն գործվել է: նույնիսկ ջուրը ձգելու համար համերգը, Բերայի կառավարչության ղեկույց եղեր է, որ խռովարարական երգեր պիտի երգվին»⁴⁸:

Իզմիրին Մարգարիտ Բաբայանին գրած իր նամակին մեջ Կոմիտաս կըսեր.

«Զես կարող երևակայել, թե ինչն էր քաղցրի, ի՞նչ օյիններ սարքեցին տխմար տիրացուններն էստեղ, բայց ես հաղթեցի և հայ երաժշտությունը հնչեցրի նորից: Կզամ, կպատմեմ մանրամասն, որ տեսնես, թե ինչպե՞ս ապականած է այստեղի բարբը, կյանքը...»⁴⁹:

Մինչև այսօր ալ կլիցվիմ քաղցր հուզումով մը՝ քանի հիշեմ Կոմիտասը իր այն օրվան փառքին մեջ, ու քանի միտքս բերեմ սրահը, հորդագեղ լեցված, ու բռնկած տափօրինակ արեւոյնքով մը:

Ու կհիշեմ, նույնքան հուզումով, Վահան Խոյան համեստ քահանան, սրահին մեջ անկյուն մը նստած, արցունքը աչքին: Միակ հոգևորականն էր այն օրը ներկա...

II.— Հաղթանակին առջև

Ըսենք անվարան, Կոմիտաս Պոլսո մեջ իր շուրջը գտավ առաջին իսկ վայրկյանն գրչի

⁴⁷ «Ազատամարտ», 1910 նոյեմբեր 23/6 դեկտեմբեր, թիվ 446:

⁴⁸ «Բյուզանդիոն», 1910 նոյեմբեր 22/5 դեկտեմբեր, թիվ 4291:

⁴⁹ «Մշակույթ», Փարիզ, 1935, էջ 163:

ու արվեստի մարդիկը: Կրքերու բռնկած այդ պահուն, երբ հայ մտավորականությունը ևս, ալիքեն քշված, ինք ալ զուրկ էր հոգեկան ներքին կապի մը, կուգար սիրով խմբվիլ սակայն Կոմիտասի շուրջ: Կոմիտաս առաջին օղակը կդառնար խորթացած եղբայրներու միջև: Ու փոխարեն, այդ մտավորականությունը տեսակ մը կորով կներշնչեր իրեն՝ գործունեության դաշտ նետվելու պահուն:

Ճեմ կրնար չհիշել, զեթ անցողակի, թե բարերախտություն մըն էր, որ հայ կյանքի այդ ալեկոծ շրջանին «Ազատամարտ» իր գլուխն ուներ Ռուբեն Զարդարյանը իբրև խմբագրապետ,— բարերախտություն, որովհետև գրականության և արվեստի հարցերու մեջ ան վեր կմնար կողմնակի ամեն նկատում:

Դեռ կհիշեմ, նույնպես, Կոմիտասի առաջին այցը մեր խմբագրատունը: Եկեր էր փնտռելու Կովկասի իր ծանոթները ու ծանոթանալու մեզ հետ: Այն քանի մը բուպեն, զոր մեր մեջ անցուց, երբեք պիտի չմոռնամ: Մարգարենքեր կան, որոնք ուշ կհասկըցվին. պետք է, որ երկար տքնին, մինչև որ գտնեն հոգիներու ճամբան: Կոմիտաս առաջին պահին կկախարդեր քեզ: Ան կսկսեր նախ սիրցնել այն թշվառ, հեք հայ գեղջուկը, որ արհամարհվեր էր մինչև այդ օրը:

Այսպես էր, որ Կոմիտաս մեզ իր հետը ունեցավ, ու ալ նշանակություն չունեցավ երբեք ուրիշ որեէ նկատում:

Հողվածագիր մը, որ Սիմեոն Գյուլո կատորագրեր, վերջերս հետևյալ կերպով կներկայացնեի Պոլսո հայ մամուլին դիրքը դեպի Կոմիտասն ու իր ձեռնարկները:

«Մանգումն» օրաթերթը, որ Սահմանադրութենեն առաջ՝ ջարդարար Համիդի ծնընդյան տոնակաարության առթիվ՝ փորին վրա սողալով՝ «բարեխնամ» ածականով կհորջորջեր դահիճը, մեծ տառերով խմբագրական մը ուներ, որով կճշար ու կպարտադրեր, որ Կոմիտաս «նախ սփեմը հանե՛... ու հետո ընե այդ աշխարհականի գործը...»: Իսկ «Բյուզանդիոն»-ը հոգեւոր իշխանության ուղադրությունը կհրավիրեր այս «գայթակղալից» առաքին վրա...:

Մյուս թերթերն ալ միևնույն եղանակը կնվազեին. «վարդապետ» ըլլալ, ու բե՛մը բարձրանալ... պատշաճ արարք մը չէ աս: Անոր տեղը՝ խորա՛նն է...: Եթե ասոր ալ աչք գոցենք, ոչ ազգ կմնա, ոչ ալ Եկեղեցի...»:

Այս խաժամութային վայրբանությունն մեջ՝ բացառություն կկազմեր միայն «Ազատամարտ» օրաթերթը, որ հազիվ լրացուցած էր տարվան մը հրատարակությունը: Թե-

պետեկ Կոստակցական խմբադրական կազմ ունեն, սակայն անվերապահ կերպով ան կաշտպաններ Կոմիտաս վարդապետի ձեռնարկը՝ իրեն մշակութային վեճ զարթոնք մը: Ցավալի պարագա մըն էր, որ այս պաշտպանութիւնը ավելի կղայրացներ հակառակորդ տարրերու կատարութիւնը... սուր հանգամանք տալով լոռայան բոյկոտին: Մայրաքաղաքի ազնվական դասակարգի ընտանեկան սահմաններն ներս չէր թափանցած տակալին «Ազատամարտ»-ը...»⁵⁰:

Սիմեոն Գյուլոյի այս տողերը, իրենց էութեամբը ճիշտ, իրականութեան հարազատ պատկերը չեն սակայն, և շատ իրավունք ունեն չովսեփ Սվաճյան դրելու այդ առթիւ, թե ճշմ կարծեր, որ իրականութեան համապատասխան ըլլան Գյուլոյի գրածները «Բյուզանդիոն» թերթի մասին, զոր ցուցուցած էր իբր հակառակորդ Կոմիտաս վարդապետի գեղարվեստական գործունեութեան Կոստանդնուպոլսո մեջ: Ընդհակառակը, Բյուզանդ Քեչյան, բազմադրույն խմբագրապետը «Բյուզանդիոն»-ի, միշտ ալ ներկա կըլլար վարդապետին սարքած համերգներուն, և դարձյալ ինքն էր, որ բուռն հոգւածով մը հակառակ արտահայտվեցաւ Կրոնական ժողովին այն որոշման, որ փիլոնազոյկ կհռչակեր Կոմիտաս վարդապետը, Արմենակ Շահմուրադյանի երգականներուն արձանագրութեան իր մասնակցութիւնը բերած ըլլալուն համար»⁵¹:

Համամիտ ըլլալով հանդերձ «Բյուզանդիոն»-ի դիրքին մասին հոգւածագրին գրածներուն, պետք կզգանք ուղղել, որ Կրոնական ժողովը իր հանգանութիւնը չհասցուց մինչև Կոմիտասը փիլոնազոյկ ընելու աստիճանին, ճիշտ չենք գտներ նույնպէս անոր դրածը, թե «Կոմիտաս վարդապետ, Օրմանյան սրբազանի հետ միասին, քարոզիչն էր Ղալաթիո Ամենափրկիչին, ուր ան կպատարագեր կանոնավորաբար տաղավարներուն»:

Սիմեոն Գյուլոյ չովսեփ Սվաճյանի հոգւածին կկցեր սակայն լուսաբանութիւն մը, ըսելով. «Արդ, «Բյուզանդիոն» թերթը՝ պահպանողական միջնաբերդին կարկառուն սլուններն մինն էր: Պատկառելի թերթ: Կրնա՞ պատահիլ արդոք, որ ան նպաստավոր վերաբերում մը ցույց տված ըլլա Կոմիտասի գեղարվեստական գործունեութեան հանդէպ: Անհավանական կնկատեմ: Որովհետեւ, այդպիսի խորիմ քայլ մը աններ-

դաշնակ պիտի ընթանար իր պահպանողական ուղղութեան հետ: Հետո, այդպիսի քայլ մը անկարելի էր որ անկատար անցներ, առանց շառաշուն հետեանքի: Ես, ինքս հետեւված չեմ «Բյուզանդիոն»-ին. սակայն ժողովուրդը պիտի խոսեր այդպիսի երևույթի մը վրա, երկարատեմ: Եվ կարելի չէր, որ այդ երևույթը անկատար անցնէր: Մանավանդ, բուռն պայքարի պահուն»⁵²:

Այս տողերը դրողը մեկն է եղեր «Ազատամարտ»-ի խմբագրութեան անդամներն և բնականաբար փառք կսեպ իրեն Կոմիտասին աջակցած ըլլալ իր ձեռնարկներուն մեջ, որքան ալ համեստ եղած ըլլա այդ աջակցութիւնը: Բայց արդարութիւնը պարտք կընեն իր վրա արձանագրել հոս, թե «Ազատամարտ» միակը չէր Կոմիտասի կողքին: Հակառակ իր պահպանողական ուղղութեան և օրոշ հարցերու մեջ իր պարզած հետամնաց կարծիքներուն, «Բյուզանդիոն» ևս զորավիդ էր Կոմիտասին և այդպէս ալ մնաց:

Ստուգիվ, Բյուզանդ Քեչյան ևս մեկն եղավ Կոմիտաս վարդապետի հանդեպ ծայր տվող խաչակրութեան դեմ առաջին ծառացողներն, դիրք, զոր բռներ էր, ըսենք ի պատիվ իրեն, քանի մը տարի առաջ եռաձայնի դեմ մղված պայքարի օրերուն ալ, պաշտպան կանոնելով բազմաձայն երգեցողութեան հայ եկեղեցիներու մեջ: Խմբագրականի մը մեջ⁵³ ան փութաց ձաղկել խավարամտութիւնը, որ կուգար խափանել Կոմիտաս վարդապետի առաքելութեան ճամբան, և կծու խոսքեր կուղղեր պատրիարքական փոխանորդ Ղեոնդ ծայրագույն վարդապետ Դուրյանի հասցեն՝ ստորագրած ըլլալուն համար շարաշուք պաշտոնագիրը:

«Եկեղեցւո պաշտոնյա Վրույր», որ ուրիշ մեկը չէր, քայց եթե պատրիարքական փոխանորդ Ղեոնդ վարդապետ Դուրյան, մեկը առաջին խաչակրութեան մեղսակիցներն, «պահպանողականութիւն» թե խավարամտութիւն» խորագրով հոգւածի մը մեջ⁵⁴ պատասխան կուտար Քեչյանի, փորձելով պաշտպանել Պատրիարքարանի արգելքը:

Քեչյան կըսեր իր պատասխանին մեջ. «Բայց ո՞վ կըսե, թե Հայ Եկեղեցւո դեմ ո՞րեւէ կերպով հարգանքի պակասութիւն կզործվի՞ իր շարականներն երգելով այս կամ այն ժողովրդային սրահի մը մեջ, նույնիսկ թատրոնի մը սրահին մեջ, երբ նույնչափ ընդարձակ ուրիշ սրահ մը, կամ աղագյին հարկ մը տրամագրելի չէ:

⁵⁰ «Միտանի գոտի», Բոստոն, 1960, թիվ 2-3, էջ 7:

⁵¹ Անդ, 1961, թիվ 3, էջ 29:

⁵² Անդ, էջ 31:

⁵³ «Բյուզանդիոն», թիվ 4293:

⁵⁴ «Բյուզանդիոն», թիվ 4296:

ինչ որ հայ եկեղեցվո մեջ միայն կրնա կատարվիլ, և հայ եկեղեցիին գուրս տեղ մը կատարվելով լավեցական, օրինական պիտի չըլլար, ո՛չ ոք կառաջարկե թաարոնի մը սրահին մեջ կատարել զայն: Պատարազն հայ եկեղեցվո մեջ միայն կրնա մատուցվիլ: Մանուկն հայ եկեղեցվո մեջ միայն կմկրտվի: Եկեղեցականներն հայ եկեղեցվո մեջ միայն կձեռնադրվին, և այլն և այլն: Ո՞վ միտքեն կանցնե աշխարհիկ սրահներու մեջ գործագրել այսպիսի ծեսեր ու արարողություններ: Բայց Հայ Եկեղեցվո շարականները կերգվին տուներու մեջ ալ, դաշտահանգեսներու մեջ ալ, և երաժշտական տիպի դաս տված ո՛րեւ սրահին մեջ: Ո՛րեւ հոգևոր երգ մը կամ աղոթք մը եկեղեցիին գուրս երգվելուն արգելք մը չկա, որովհետև ասիկա ծիսակատարություն մը, խորհուրդ մը, արարողություն մը չէ, որ եկեղեցիի շենքին սեփական ըլլալու հետք ունենա, եկեղեցիի շենքին ներս ո՛րեւ տեղ երգվելու հարմարություն ունեցող շարական մը, «Տէր ողորմեա» մը, հոգևոր տաղ մը կրնա երգվիլ նաև թաարոնի մը շուրս պաաերուն մեջ, մանավանդ որ հոն տեղի ունեցածը թատերադրություն մը չէ այն պահուն, այլ թատերին սրահը փոխ առնված է իբր ո՛րեւից ժողովրդային սրահ մը, ուր այս կիրակի մինչև հազար հայեր ու հայուհիներ կրցան եկեղեցիի և ամենայն երկրողածությունամբ, խորին լուսթյան ու հափշտակություն մեջ, ունկնդրեցին հայ հոգևոր տաղերու լավագույն երգեցողություն մը: Ասոր մեջ ո՛ւր է եկեղեցական օրենքի կամ սովորության հակառակ ոտնձգություն կամ սրբապղծություն: Ասոր մեջ ո՛ւր է Հայ Եկեղեցվո պատկառանքը նվազեցնող կամ Եկեղեցին անպատվող, կամ կրոնային հավատալիքները տկարացնող ո՛րեւ շարժում կամ զգտում»⁵⁵:



Կոմիտասի հաղթանակը 22մեցուց Պոլսո մեր տիրացուները: Իրագեկ դավերուն, որոնք կսարքվին մուսիին մեջ, այն հույսն ունեին անոնք, որ համերգը պիտի ձախողեր, կամ գոնե հայտադրեն դուրս պիտի հանվին եկեղեցական երգերը: Զուրն ինկավ իրենց ցնծությունը, երբ Պատրիարքարանի տեղ ձեռնարկը իր սաղմին մեջ վիժեցավ:

Նույն խմորն չէին անշուշտ Պոլսո բոլոր տիրացուները: Արդարև, մամուլին մեջ հարուցված սույն տխուր վեճի ընթացքին, Մ. Թիրյաքյան, որ Ս. Աստվածածին եկեղեցվո

երաժշտական էր այդ պահուն, գրություն մը կղեկողը «Բյուզանդիոն»-ի մեջ⁵⁶ «Տ. Կոմիտաս վարդապետի համերգին առթիվ» խորագրին ներքե, իր «սրտաբուխ շնորհավորությունները» հայտնելու համար այն «կուռ խմբագրական»-ին մասին, որով թերթը «իրավամբ և փաստացի կերպով ձաղկեր էր ամեն անոնք, որ ծթած գաղափարն ունեցան արգելելու համար Տ. Կոմիտաս վարդապետի, այդ երաժշտական հանճարին սարքած համերգին առաջին մասը, եկեղեցական երգերը»: Բարյացակամ ոգիով լեցված այս երաժիշտը իր ցասումը հայտնեց հետո, որ Կոմիտասի զույգ դասախոսությունաց պահուն մեկ հայ երաժիշտ մը միայն ներկա գտնված է, ի վերջո կուղղեր համբույրներ գիտնական վարդապետին տաղանդալից ճակտին ու ջերմագին համակրանք խմբագրության՝ իր շատ գեղեցիկ և ջախջախիչ խմբագրականին առթիվ:

Ամակրանքի բացականչություններ հասան նաև զավառն: «Բյուզանդիոն»-ի նույն այն թիվին մեջ, ուր պոլսեցի հիշյալ հայ երաժիշտը տիրացուներու խմբակեն անշատվելով, իր մեծարանքը կուղղեր Կոմիտասին, զավառական մոտակա քաղաք մը, Ագափազարեն, ողջուն կղրկեր Երաժշտագետ հայ բահանա մը: Այս քահանան, որ Սերովբե քահանա Պոլսոյանն էր, երբեմն աշակերտած Զերյան Համբարձումին, և ծանոթ նաև Սիրաք Սամվել ստորագրությունամբ «Բյուզանդիոն»-ի մեջ իր գրած հոգվածներով, լույս կընծայեր Քրաք նամակ մը առ Տ. Կոմիտաս վարդապետ, ըսելու համար, որ «Ճշմարիտ հայուն սրտին ու հոգիին խոսող աղբյուր-կրոնական բնատոհմիկ հնադրոշմ երաժշտության հայտնության մասին Կոստանդնուպոլսո Բերտի-շանի սրահին մեջ Ձեր տված արվեստական հաղթանակին արձագանքը մեծ ուրախությամբ լսելով, ամենարուսն սիրով կխնդակցիմ ձեզի ու կշնորհավորեմ ձեզ: ... Դուք, Տ. Կոմիտաս Հայր, պետք է գյուցաղնաբար կովիք այն բոլոր դժվարություններուն գեմ, որոնք կներկայանան շատ անգամ ձեր կարգակիցներուն կողմն: Լողվածագիր քահանան հաջողության մաղթանքներով փակելի հետո քրաք նամակը, հետգրության մեջ հրավեր կուղղեր Կոմիտասին՝ այցելել նաև Ագափազար, հոն ևս տալու համար համերգ մը:

Եվ ո՞վ հեգնություն, նույն այդ երանելի քահանան պիտի ըլլար, որ քանի մը տարի հետո, — ինչպես պիտի տեսնենք, — «Աղա-տամարտ»-ի և «Տաճար»-ի մեջ լույս ընծա-

⁵⁵ «Բյուզանդիոն», 1910 դեկտեմբեր 7, «Պահպանողականություն» թե խավարամտություն»:

⁵⁶ «Բյուզանդիոն», թիվ 4303:

յած իր հողավածներով, պիտի միանար ապերասան այդ կարգակիցներու խումբին՝ ուրանալու համար ինքնուրույն հայ երաժշտության մը գոյութիւնը և ստվեր փռելու Կոմիտաս վարդապետի առաքելութեան վրա:



Բարերախտութիւնն եղավ Կոմիտասին համար, որ առաջին իսկ պահէն Պոլսո մեջ իր կողքին ունեցավ հայ մտավորականութիւնը, հայ մամուլի լավագույն օրգանները և երիտասարդութիւնը:

Գինովութեան իր տարիներուն, շատ դժբեր տեսավ Պոլիսը: Սուս և իրավ հերոսներու ամբողջ փաղանգ մը ողողեց միշտ զայն: Ոմանց փառքը փխրեցավ շուտ մը, բայց եղան ալ, որոնց հմայքը երկար դիմացավ: Սմբած համբավներու կողքին եղան և ոմանք, որոնք տեղ գրավեցին զանգվածներու սրտին մեջ: Սակայն ոչ մեկը կրցավ, Կոմիտասին չափ, պաշտամունքի առարկան գառնալ երիտասարդ սերունդին:

III.— Կոմիտաս իր «քերթնքելն»-ներում մեջ

Կոմիտաս կրցավ արագ սկսիլ իր առաքելութիւնը: Ան բախտն ունեցավ պատրաստ խումբ մը գտնելու, — Ղալաթիո երգչախումբը, որ բաղկացած էր առավելապես Կեդրոնականի հին ու նոր սաներէն և բազմաթիւ ուրիշ երգիչներէ, որոնք մաս կկազմէին խումբին մեծ մասամբ եռաձայնի առաջին օրերէն: Զիլինկիրյանին, Մանասին ու Սինանյանին քրահներ ի զուր չէր անցեր. ան մարզված խումբ մը կհանձնէր Կոմիտասին, որպէսզի կորիզը դարձնէ իր ծրագրած մեծ երգչախումբին: Ղալաթիո սուլն երգչախումբը համեստ ղեկավար մը ունէր այդ պահուն հանձին Արաաշես Ապաճյանի. ան, հիացող մը Կոմիտասի անձին ու զործին, իսկույն մտավ անոր հովանիին տակ. ան շուտով մաս պիտի կազմեր ինք ևս այն վեցյակին, որ Կոմիտասի Պոլսո ձեռնասուններուն անգորանիկ կորիզը պիտի դառնար և որ հնգյակի պիտի վերածվեր սակայն շուտով, Ապաճյան մահացած ըլլալով պատերազմի ընթացքին: Սուլն հնգյակն էր, որ հեաազային հավաքական ճիգ մը պիտի փորձեր «Կոմիտասյան հինգ սաներ» անունին ներքե, մեծ տարողութեան հետո ամեն մեկը առանձինն շարունակելու համար հայ Սփյուռքին մեջ գործը, զոր Կոմիտաս կտակ էր ըրած իրենց:

Կոմիտաս կարիք ունէր սակայն երգիչներու ավելի ստվար թիվի մը. առաջին հերթին էսայան վարժարանը օգնութեան հասավ, տրամադրելով իրեն ոչ միայն դեռստի

ձայներ մանր տղոցմէ, այլ և իր ուսուցչուհիներն ու սանուհիները, որոնք իր իգական ձայներուն կորիզն եղան, ինչպէս որ էսայանը, Կեդրոնականին հետ, կեդրոնը պիտի գառնար իր փորձերուն:

Յարեր եկան ուրիշ թաղերէ ալ, ինչպէս Սկյուդարեն, ուր Պերպերյան վարժարանը կար, մեկը Պոլսո հոգեկան այն օճախներէն, ուր բացառիկ գուրգուրանք գտավ Կոմիտաս, մանավանդ երբ Փարիզէն գարձավ, իր հորը ստեղծած կրթական հարկը վարելու համար, Շահան Պերպերյան: Շահան, իր եղբոր՝ Օննիկին պէս, երաժշտութեան ևս հետեւէր էր, հետազային ամենէն ջերմ համակիրը դառնալու համար Կոմիտասին և անոր գործին:

Դյուրին չէր այսպիսի խայտարղետ խումբ մը մարզել ու վարել. Կոմիտասի մոգական ուժը պետք էր հայ երգին ու իր երանդներուն ընտանեցնելու համար սուլն երեք հարյուր հոգին, որոնց մեջ ստվար թիվ մը կկազմէին «նոտա չգիտցողները»: Կոմիտաս պետք է կախարդած ըլլար զանոնք, մարզելու համար այդքան արագ, քանի մը շաբաթէն դանոնք հանելու համար համերգի բեմը:

Նման հրաշք մը Կոմիտաս միայն կրնար գործել, ու ան այդ հրաշքը կպարտի այն մեծ հմայքին, որով կրցեր էր իրեն կապել իր «քերթնքելն»-ները: Կոմիտաս այդպէս կկոչեր իր խումբին տղաքը, մանչ թե աղջիկ, ինչպէս որ «զուռնաչի» մակդիրը կուտար իր տարեց ծանոթներուն, բոլորը «փազաբշական» ածականով մը ախազոսելու մոլութենէն տարված այս յուրօրինակ մարզը:

Ու իր «քերթնքելն»-ները երբեք ամոթով չձգեցին զայն:

Մարդ չի կրնար առանց հուզումի կարգալ հուշերը, զորս իր «քերթնքելն»-ները գրեցին անոր մեռնելէն հետո:

«Վարդապետը հմայած էր այդ բազմութիւնը, — կըրէ տիկին Տիրուհի Միսակյան, — իր ձեռքերու պարզ շարժումներով և իր դժբերին հարաճուն և մշտափոփոխ արտահայտութիւններով, համաձայն երգին բնույթին, շարժում և արահայտութիւն, որոնցմէ միմիայն կախում ունէր հաջողութիւնը մեր երգածին: Այն հուժկու, զոռ ու մարտական թափը, զոր կստանար «Սիփանա քաջեր»-ը, իր դժբերին խաղերը և ձեռքին շարժումներն էին, որ կնեղնչեին երգիչներու, ինչպէս այն զվարթ, դինովի երգը՝ «Արի թմարը ըլլալ» հա՛ հա՛ հա՛-ն, որ կասկած կնեղնչեի մեզի, թե վարդապետը գինով է անպատճառ»⁵⁷:

Գրիգոր Ճոլորյան կպատմէ.

⁵⁷ «Հառաջ», 1935, նոյեմբեր 3,

սերը խումբը վարելու համար կբարձրանար ամբիոնին վրա, ամենքս մեկ խորին լուռության մեջ աչք ու ականջ կտրած, տեսակ մը ելեկտրականացած վիճակով, բերնեն կախված կմնայինք. այնքան մեծ ու փոքր ներգործություն մը կկատարեր մեր պատանի հոգիներուն վրա: Չգիտեմ ինչ մոգական կարողություն մըն էր, որ Կոմիտաս վարդապետի հանդեպ վախով խառն սեր ու հարգանք կպարսազեր մեզի: Ու անհամբեր երգեցողության պահերուն կսպասեինք:

... Բայց վա՛յ էր եկեր այն անդամին, որ երգելու ատեն սխալ ձայն կհաներ կամ ուշագործությունը ուրիշ տեղ կկեդրոնացներ: Վարդապետին ականջն ու աչքերը այնքան սուր ու այնքան ճշգրիտ էին, որ երեք հարյուր հոգինոց խումբին մեջն էր վայրկյանին կնշարներ ու կմատնանշեր զայն, առանց վարանելու հրապարակավ զինքը հանդիմանելով, կես լուրջ կես կատակ: Իսկ երբ հավաքական սխալ երգեցողություն մը նկատեք, իր սիրական մակդիրը կփակցներ մեր ճակատին, սեղմված ականներուն մեջն մեզ կանչելով «բերթենքեկներ» և անզուսպ խնդուք պատճառելով մեզի»⁵⁸:

Այսպես էր Կոմիտաս իր «բերթենքեկ»-ներուն մեջ: Հաճախ տեսած ենք զինք փորձերու պահուն: Լուրջ և երբեմն չափեն ավելի խիստ, քաղցր կգառնար մեկն, և կատակով մը, բառախաղով մը կթուլցներ խումբին պրկված ջիգերը, հետո դարձյալ հոնքերը կնճեկու և չափ տալու համար խոժոռ ու խստաբեր: Ու փորձը երբ կմննար, կրկին շենշող ընկերոջ մը կփոխվեր, ու ամեն մեկուն համար ուներ սրամիտ բառ մը: Հետո սանգուղքներեն կիջներ արագ-արագ, և շտապով կմեկնեի տուն, լծվելու համար տարբեր իր աշխատանքներուն:

Շատեր սիրված են իրենց սաներեն, բայց ոչ մեկ ատեն այսքան պաշտամունքի և փոխված սեր մը:

IV.— Հոգիականի ափերուն վրա

Պոլսո իր առաջին համերգն իսկ բացավ Կոմիտասի նոր ճամբան: Անոնք որ այդ օրերուն զայն ճանչցան, գիտեն, թե ինչպես դեկորված էր ան այդ պահուն: Իր առաջին դասախոսությամբ գծեր էր ուղին, ուրկե պետք է ընթանար հայ երգը. բխած գեղջուկի սրտեն, պետք է ուռճանար տակավ այդ երգը, մաղվեր, մշակվեր, փրկվեր իր խորթ գծերեն, պատշաճեր նոր օրերու պահանջներուն: Թոթափեր Արևելքն ու իր մեղկությունը, բայց պահեր անոր դունագեղ,

արևոտ ոգին. իր թախծությունն վտարեր հուսահատությունը, ու ժպիտ գներ իր արցունքին մեջ. իր կարոտի եղանակներուն մեջ հույս կաթեցներ, և իր մորմոքներուն մեջ լավատեսություն: Այսպես մեզ գծեր էր ճամբան, ուրկե պետք է քալեր հայ երգը, այսինքն իր իսկ ճամբան:

Իր անգրանիկ համերգով ան զղացներ էր, որ ամուր է իր ոտքին տակ հողը, ու կրնար այլևս անհողողդ քալել հայ երգին հետ մեկտեղ: Խուժերը, որոնց հանդիպեր էր իր առաջին քայլերուն, կրնար այլևս անգոսնել ու արհամարհել. ան իր ոտքին տակ որպես կովան ուներ բովանդակ երիտասարդություն մը, որ արդեն զինք հասկցած էր ու կուզեր քալել մեծ վարպետին հետ: Բոլոր անոնք, որ երբեմն Ղալաթիո երգչախումբն ստեղծեր էին, իր շուրջն էին հիմա, ու այլևս իրենց հագուրդ չէր կրնար տալ սոսկական երգը, որով տարված էին ցարգ. անոնք կուզեին հա՛յ երգը:

Այդ երիտասարդությունը անգամ մը ևս երիտասարդացած էր, նույնիսկ անոնք, որ արգեն սպիտակ մազեր ունեին Ստեփան Ալալայանին պես, և բռնկած նոր խանգավառությամբ: Գտած իրենց առաջնորդը, կուզեին իրենց ուրույն կազմակերպությունն ստեղծել անոր հովանիին, անոր շունչին տակ: Առաջին համերգին իսկ օրերուն, արդեն անոնք վճռած էին դուրս գալ եկեղեցական երգչախումբի մը անձուկ սահմանեն, և մասնել գործունեության նոր դաշտը, զոր Կոմիտաս իրենց բանալ կխոստանար:

Ինք, որ իբր ռադաձայն բաժնվեր էինք դպրոցեն, հպարտությամբ կտանեինք, որ կեդրոնականի մեր երբեմնի դպրոցակիցներն են, որ այս նոր ոգևորության կորիզ կգառնան, ինչպես ատենին եղեր էին առաջին եռաձայնին: Անոնցմե կիմանայինք, որ արդեն փորձերը կըլլան կազմակերպություն մը ստեղծելու Կոմիտասի կողքին, և անոր մեջ համախմբելու բոլոր անոնք, որ կսիրեին հայ երգը: Երեկ աշակերտներ էին եղեր եռաձայնին կորիզը, այսօր Կոմիտասի շուրջ համալսարանական ուսանողներ էին արգեն բոլորված, շատերը իրավաբանական:

Ծիշտ այդ օրերուն Իզմիր պահ մը Կոմիտասը խլեց: Պոլսո առաջին համերգն քանի մը օր հետո Կոմիտաս արգեն Իզմիր էր: Զայն կանչեր էին, որպեսզի խումբ կազմե և համերգ տա հոն ալ:

Զմյուռնիան իր երբեմնի փառքը չուներ, բայց այնուամենայնիվ հայ մտավոր երկրորդ մեծ կեդրոնն էր Պոլսեն հետո, և փորձեց ամոթով չմնալ: Իր համեստ ուժերով և հնարավորություններով եթե չէր կրնար

⁵⁸ «Հառաջ», 1935, նոյեմբեր 3:

մրցիլ մայրաքաղաքին հետ երաժշտական հաղորդության մը մեջ, գոնե ուզեց մրցման հանել իր խանդավառությունը:

Կոմիտաս չէր կրնար տեղի շտալ Իզմիրեն իրեն ուղղված դիմումներուն, թեև իր ներկայությունը անհրաժեշտ էր նաև Պոլիս, ձև և կերպարանք տալու համար հետզհետե աճող ոգևորության երիտասարդության մեջ, և անոր շուրջը համախմբելու համար արվեստի բարեկամներ ալ դուրսեն:

Կոմիտաս Պոլսեն կմեկներ առանց կարենալ ծրագրելու պատրաստելու նման ընկերակցության մը, մինչ րոպե անհամբեր էին զայն ստեղծել ոգևորության առաջին իսկ թափին մեջ:

Ստեփան Ակայան, ծանոթ մանրանկարիչը, որ երաժշտական հակումներ ուներ և մինչև իսկ տենորի հավակնություն իր սպիտակ մազերուն մեջ ալ, և որ, ինչպես աստեղին Ջիլինկիրյանի, հիմա ալ Կոմիտասի կողքին էր իր անսպառ խանդավառությամբ, իր նամակներով մինչև Իզմիր հալածեց վարպետը, որպեսզի աճապարե կանոնադրություն խմբագրել իրենց:

Ահա Կոմիտասի պատասխանը.

«1910 27/ժԲ, Ձմյունիս»

Ազնվաշուք Ստեփան էֆենդի Ակայան.

Երեկ ստացա ձեր գիրը, այսօր պատասխանում եմ: Անմիջապես սկսա կազմել միության հիմնական կանոնադրությունն ու ծրագիրը. որովհետև դուրին գործ չէ, ուստի և ավհասի չեմ կարող կազմել, մի քանի օր ձեր համբերությունը սնուցեք: Եվ որպեսզի ժամանակ վաստակեք, լավագույն է արժարծել ընկերության պետքը և դրամը հայթայթելու միջոցներ որոնել:

Շնորհավորում եմ անվանդ տոնը՝ կեր, արք և ուրախ լին:

Բարևե մեր տղաներուն՝ որուն հանդիպես, օձիքներից բռնե, կեցուր ու հազորդե՝ ողջուն քերթներելի:

Ես լավ եմ. բայց գործիս համար այնքան էլ գոհ չեմ. baryton ու basse ձայներ խիսա նվազ են. եթե 50—60 հոգինոց խումբ կազմվի՝ մեծ քան է:

Հազորդելիք բաներ կան, բայց առայժմ լուռ լինուք:

Բարևա Հարենց և Աշխյան էֆենդիներին: Վերջինին գրելիքներ ունեմ, սակայն ընկերությանս կանոնագիրը լրացնելն հետո. որ համբերսցէ իսպանազ կերիցէ:

Ողջունիվ Կոմիտաս Վ.⁶⁰

⁶⁰ Թ. Ազատյան, «Կոմիտաս վարդապետ, Կ. Պոլիս, 1931, էջ 114—115:

Մինչ այս մինչ այն, Կոմիտաս Իզմիրի իր համերգին կպատրաստվեր:

Համերգեն առաջ, Կոմիտաս Ձմյունային կգրեր Փարիզ, Մարգարիտ Բաբայանին.

«... Փախչելով հայրենիքիցս, հինգ համերգ կազմակերպեցի: Այս նամակն էլ գրում եմ Ձմյունիայից, ուր 6-րդը պատրաստելու վրա եմ: Հետո պիտի դառնամ Կոստանդնուպոլիս և տամ 7-րդը հօգուտ Ազգային հիվանդանոցի, ապա պիտի մեկնիմ Ադափազար՝ 8-րդը տալու. եթե ուրիշ տեղից հրավեր չստանամ, ուղղակի Վիեննայի վրայով Փարիզ պիտի գամ. բայց ե՞րբ, չեմ իմանում»⁶⁰:

Կոմիտաս Իզմիրի մեջ ևս դասախոսություն մը ներկայացավ առաջին անգամ և հայ երաժշտության ինքնուրույն գեղեցկությունը պանծացուց, զայն ներկայացնելով իրեն շքեղ գոհարներն մին հայ ժողովուրդի հոգեկան զանձին: Իր այս դասախոսության մեջ է, որ Կոմիտաս ըրած է խորապես նշանակալից այն խոսքը, թե «քաղաքակրթությունը տգետ ժողովուրդներու մեջ քաղաքաքանդություն է»:

Փոխանակ 50—60 երգիչի, ինչպես կասկածներ էր Կոմիտաս, 135 երկսեռ երիտասարդներ խմբվեցան իսկույն իր շուրջը, որոնք քանի մը շաբաթեն երգիչի պիտի փոխակերպվեին անոր մոգական շունչին տակ, և, ինչպես կգրեր Սուրեն Պարթևյան խումբին փորձերուն ներկա ըլլալն հետո, «Կոմիտաս վարդապետ, շնորհիվ երաժշտական իր ներհուն մեթոդին, հաջողած է, կարճ ժամանակի մեջ, այնպես մը մարդել իր երկսեռ աշակերտները, որ ալ կարելի դարձած է իրեն տիրական համերգավարի իր մատեներովը լարել, մազնիսացնել զանոնք, և իր ուզած ներգաշնակություններն հանել անոնց հոծ շարքերեն»⁶⁰:

Համերգը, որ 1911 փետրվար 13-ին տեղի ունեցավ Սպորտինգի սրահին մեջ, կախարդեց նաև Իզմիրը և զմայլեցուց օտարները, որոնք հոն ներկա էին: Ու ավելցցենք, որ հայ հոգևոր դասը իր Պոլսո կարգակիցներին ավելի լայնախոհ եղավ: Համերգին ներկա եղան առաջնորդ Ինճեյան վարդապետը, Հակոբ Աշոտ եպիսկոպոս և քահանաները: Իզմիր, այս կեսին մեջ, մայրաքաղաքը կհեղձեր...:

⁶⁰ «Մշակույթ», Փարիզ, 1935, էջ 163:

⁶¹ «Երաշխեք», Իզմիր, 1911, հունվար 26:

(Շարունակելի)